ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն
- Դպրոցի տվյալներները
- Դպրոցի արգացման ծրագրի անձնագիր
- Առաքելությունը
- Գլխավոր նպատակները
- Ռազմավարությունը
- Հիմնական խնդիրները
- Ծրագրի գլխավոր նպատակները
- Դպրոցի զարգացման հիմնախնդիրները

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

- Կրթության մասին ՀՀ օրենք
- Հանրակրթության մասին ՀՀ օրենք
- ՀՀ սահմանադրություն
- Դպրոցի կանոնադրություն
- Երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենք
- Երեխաների իրավունքների մասին կոնվեցիա
- Լեզվի մասին ՀՀ օրենք
- ՊՈԱԿ-ի մասին ՀՀ օրենք
- ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

-ԻՆՉ սիրով է արված

Արված է կրկնակի...

Դպրոցը պետության հիմքն է: Նրա առաքելությունն ավելի մեծ է, քան կարելի է պատկերացնել առաջին հայացքից: Դպրոցի պատասխանատվությունն է կրթել անհատ, ով ներկայացնում է ընտանիք, սերունդ, քաղաք, երկիր, պետություն:

Դպրոցը պետք է լինի հենման կետ, որը կշրջի երեխայի աշխարհը դեպի լույս, դեպի ինքնաբացահայտում:

Ժամանակակից աշխարհում հանրակրթության ոլորտում կարևոր են դառնում ստեղծագործելու ունակությունը, քննադատական մտածելակերպը, թիմային աշխատանքը, բարդ խնդիրների հնարավոր լուծումներ տալը : Դպրոցի առաքելությունն է ձևավորել ուսումնական, սոցիալական, հոգեբանական այնպիսի միջավայր, որը կնպաստի հաջողակ և մրցունակ երիտասարդների և անհատների ձևավորմանը: Յուրաքանչյուր սովորող եզակի է իր ուրույն տաղանդով և ուսման ոճով, և որպես այդպիսին պահանջում է բազմատեսակ մանկավարժական ռազմավարություններ՝ սովորողի ուսուցման որակն առավելագույնի հասցնելու համար:

Իրականացվող կրթական բարեփոխումները նպատակաուղղված են

Ա, ապահովելու որակյալ կրթություն,

Բ, բարձրացնելու հանրակրթության արդյունավետությունը,

Գ, կրթությունը դարձնել արդիական և համապատասխանեցնել զարգացման պետական և միջազգային միտումներին,

ՏՎՅԱԼՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

- ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպություն /այսուհետ՝դպրոց/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է ի դեմս ՀՀ Կառա-

վարության /այսուհետ հիմնադիր/

- 1. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում գրանցվել է2003 թվականից:
- 2 Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 13. 03. 2013 թվ. Ny 190-Ա/Ք հրամանի տրված է լիցենզիա Ny 0935,0939,0760: Դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝
- տարրական ընդհանուր-92 սահմանային տեղով.
- հիմնական ընդհանուր-100 սահմանային տեղով
- միջնակարգ/լրիվ/ ընդհանուր կրթական գործունեության-60 սահմանային տեղով

- 3. Դպրոցում առկա են՝
- ա. դասասենյակ-12,
- բ. առարկայական կաբինետ-3,
- գ. լաբորատորիա-2,
- դ. առանձնասենյակ-4,
- ե. ճաշարան, գրադարան, դահլիճ,
- զ. մարզադալիճ-1.
- 4. Դպրոցի հասցեն է՝
- ՀՀ Շիրակի մարզ, համայնք Ամասիա, բնակավայր Ամասիա 24 փողոց, 1-ին փակուղի, 3-րդ դպրոց.
- 5. Դպրոցը հարմարեցված շենք է՝կառուցված 1980 թվականին:
- 6. Դպրոցն ունի՝
- ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ծջևաթղթեր, շտամբ և այլ միջոցներ:
- 7. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
- 8. Դպրոցը միահերթ է և աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով:
- 9. Դպրոցը կարիք ունի վերանորոգման, բարեկարգման, նոր գույքի՝աշակերտական սեղան-աթոռներ,պահարաններ, ուսուցչի սեղաններ, գրատախտակ էլեկտրոնային, մարզագույք, համակարգիչներ և այլն:

Միջնակարգ կրթությունը պարտադիր է (եթե օրենքով այլ բան նախատեսված չէ) և հասանելի է յուրաքանչյուրին՝ անկախ նրա հետաքրքրություններից, նախնական մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից:

Պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգային հիմքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ, սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

Հանրակրթական դպրոցի գերխնդիրը շարունակում է մնալ նաև կրթության որակի բարելավումը: Այդ գերխնդրի իրականացման համար պետք է դպրոցի զարգացումը ապահովել կառավարելի, գիտականորեն հիմնավորված նորովի մոտեցումներով:

ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Դպրոցն ունի ԿԳՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործունեության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք համապատասխանեցված են դպրոցի կառուց-վածքային առանձնահատկություններին և աշխատանքի ընթացքում լուրջ դժվարություններ չեն առաջացնում,
- ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը,
- Էլեկտրոնային դասամատյան,
- Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ,
- Սովորողի անձնական էլեկտրոնային գործ,
- Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան,
- Հիմնական կրթության վկայականներիի բաշխման մատյան,
- Ավարտական, պետական ավարտական փոխադրական, գիտելիքների ստուգման արձանագրություններ,
- Էլեկտրոնային հաստկացուցակ,
- Տարիֆիկացիոն մատյան,
- Ուսումնական հաստատության մանկավաժական խորհրդի նիստի արձանագրություն,
- Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան,

- ՈՒսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝էլեկտրոնային տարբերակով,
- Դասալսումների արդյունքների արձանագրություն,
- Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
- Սովորողների շարժի մատյան,
- Այս փաստաթղթերը լրացվում են ըստ խորհրդակցական մարմնի կանոնադրության.

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Դպրոցի առաքելությունը

աշակերտ

մարզ

ուսուցիչ

համայնք

ծնող

երկիր

- Դպրոցն ուսումնադաստիրակչական հարցերում պետք է ապահովի երեխայակենտրոն մոտեցում.
- Դպրոցը պետք է ապահովի կրթության որակ միջնակարգ կրթության չափորոշիչներով նախատես- ված գիտելիքների իմացության,կարողության և հմտություններ /այդ թվում ճանաչողական, տրա- մաբանական, հաղորդակցական, համագործակցային,ինքնուրույն գործողության և արժեքային համակարգի
- Դպրոցում ուսուցումը պետք է կապվի կյանքի հետ, կրթությունը պետք է բավարարի շրջանվարտի պահանջները, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման, աշխատանքի անցնելու, այնպես էլ կրթությունը շարունակելու առումով.
- Մարզի դպրոցների մեջ դպրոցը պետք է լինի ճանաչված ինչպես իր սովորողներով, այնպես էլ կրթության բովանդակության ապահովմամբ, օրինակելի ուսումնական գործընթացով համա- պատասխան երեխայակենտրոն ուսումնական միջավայրով և շրջանավարտների հաջողություն- ներով .
- Դպրոցը պետք է վստահի երեխաներին, խրախուսի նրանց հասարակական հանրօգուտ գործու- նեությունը և օժանդակի երեխաների նախաձեռնությունների իրագործումը.
- Ապահովի համայքի ներգրավվածությունը կրթական որակի բարելավման նպատակով համագոր- ծակցությաան և փոխվստահության ակնկալիքով
- Դաստիարակի հայ,ով բազմազգ մոլորակում գիտակցի իր ազգային յուրահատկությունը, մշակույ- թի բացառիկությունը և գիտակցի իր պահպանողի և փոխանցողի դերը.
- Ձևավորվի ինքնուրույնություն, մեդիագրագիտություն, համարձակ երազող,սեփական տեսակետը բարձրացնող, քննարկելու, խոսելու և համագործակցելու պատրաստ անհատ.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Կրթության որակ

- Սովորողների անհատական յուրահատկությունների մակարդակը (հետաքրքրություններ, մոտիվացիա, հակումներ, տարիք և այլն)
- Դասավանդողի մասնագիտական հմտությունների մակարդակ
- Ժամանակակից ՏՏ-ների օգտագործման մակարդակ
- Մեթոդական ապահովման մակարդակ (դասագրքերի որակ, մեթոդական հմտությունների կիրառություն)
- Արտաքին ազդեցություն (ընտանիք, ընկերներ, շրջապատ, համադասարանցիներ)
- Սովորողների գիտելիքների գնահատման մակարդակ
- Մանկավարժական փոխներգործություն դասավանդողի և սովորողի միջև: Կոմունիկացիոն հարաբերությունների մակարդակ:

Նորարարություն և տեխնոլոգիաներ

Խթանել.



ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը,	Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան,
կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեությունը,	դպրոց-համայնք կապը և համագործակցությունը,
աշակերտական համակազմը,	դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը,
մանկավարժական համակազմը,	մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ ունեցողների պակասը,
համագործակցությունը կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ,	մարզադահլիճի գույքի սակավություն, տաք ջրի բացակայություն, ջերմային ռեժիմի խախտում,
ուսումնական միջավայրը,	լաբորատորիաների գույքի, նյութերի, սարքավորումների սակավությունը,
բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը:	ՏՀՏ-ների ներդրման և նորամուծությունների կիրառման ցածր մակարդակ:

1. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր	Աշխատակազմի գործունեության թույլ կողմեր
• Դպրոցի վարչական կազմն աշխատում է կոորդինացված, արդյունավետ, կա աշխատանքի հստակ բաժանում, ինչը տեսանելի է դարձնում յուրաքանչյուրի կատարած աշխատանքը, թույլ տալիս գնահատել այն, արագ գտնել թերությունները և շտկել:	
• Դպրոցի ուսուցչական կազմն օժտված է մասնագիտական բարձր կարողություններով, շատերն ունեն աշխատանքային հարուստ փորձ, սկսնակ ուսուցիչները համագործակցում են տարիների փորձ ունեցող մանկավարժների հետ:	
2. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության ուժեղ կողմեր	**Սովորողների ուսումնառության և այլ գործունեության թույլ կողմերը**
• Աշակերտների մի մասը մոտիվացված է, հավատում է, որ իր ջանքերը կբարելավեն իր կատարողականությունը: • Սովորողներն ակտիվորեն մասնակցում են դպրոցում գործող խմբակներին, «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի պարապմունքներին:	• Ուսուցման ձանձրալի մեթոդները, • մոտիվացիայի պակաս, • աշակերտներն ունեն այլ առաջնահերթություններ:
3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի	**Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի այլ**

• Դպրոցի ծնողական համակազմը աջակից է ուսուցչական համակազմի նախաձեռնություններին:	• Դպրոցի ծնողական խորհրդի որոշ անդամներ անարդյունավետ են մասնակցում կամ ընդհանրապես չեն մասնակցում դպրոցի առօրյային, սահմանափակվում են միայն ծնողական ժողովներին իրենց երեխաների առաջադիմության մասին տեղեկանալով: Կառավարման խորհուրդը ծանոթանում է դպրոցում առկա խնդիրներին, սակայն չունի բավարար լծակներ դրանց լուծմանն աջակցելու համար:
4. Ռեսուրսներով ապահովվածությունը	**Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները**
• Դպրոցն ապահովված է լուսավոր դասասենյակներով, ունի քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ, առանձնացված դասարաններ շախմատ, ինֆորմատիկա, ՆԶՊ առարկաների համար , պրոյեկտոր, սպորտային մարզադահլիճ, ճաշարան:	• Լաբորատորիաների, ճաշարանի, մարզադահլիճի և դասասենյակների գույքը թարմացման կարիք ունի: Դպրոցը չունի արհեստանոց, որտեղ կանցկացվեն տեխնոլոգիայի դասաժամերը: Համակարգչային դասասենյակն ունի նոր համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակի, տեսախցիկների կարիք:
5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները	**Նոր նախաձեռնությունների ուղղությամբ թույլ կողմերը**

• Դպրոցը հաճախ է կազմակերպում միջոցառումներ: Դպրոցն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ նախկին շրջանավարտների և դպրոցի ծնողական համակազմի համար լուսաբանում են դպրոցի բոլոր նշանակալից իրադարձությունները:	• Դպրոցն ունի բազմաթիվ նոր ու հետաքրքիր նախաձեռնություններ, որոնք իրականացնելու համար անհրաժեշտ են նյութական մեծ միջոցներ, սակայն դպրոցը չունի այդ միջոցները տրամադրող բարերարներ, իսկ նախկին շրջանավարտները չեն խրախուսում դպրոցի նախաձեռնությունները իրենց միջոցներով:
6. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը	**Հաղորդակցության, համագործակցությոան թույլ կողմերը**
• Դպրոցը համագործակցում է թե՛ միջազգային, թե՛ տեղական հասարակական կազմակերպությունների հետ:	• Դպրոցը կարող է համագործակցել հասարակական ավելի լայն շերտերի հետ, օրինակ՝ տարբեր մասնագիտությունների տեր անձանց, մանկագիրների, երաժիշտների, կոմպոզիտորների, մեծանուն մարդկանց հետ: Անհրաժեշտ է 11 ավելի հաճախ կազմակերպել այցելություններ արվեստի օջախներ, թատրոններ, պատմամշակութային վայրեր:
7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված հաջողությունները	**Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված դժվարություններն ու խնդիրները**

	• Բյուջեն բավարար չէ շատ ծախսեր ֆինանսավորելու համար: • Դպրոցը հոգաբարձուների խորհուրդ և հովանավորներ չունի: • Ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում:
Հնարավորություններ	**Վտանգներ**
• Դպրոցը հնարավորություն ունի տալու որակյալ և կայուն կրթություն բոլոր աշակերտներին, ապահովելու նրանց անվտանգ միջավայրը,	• Տարերային խոշոր աղետների դեպքում առկա են վտանգներ: • Դպրոցի շենքը տիպային չէ, ունի ոչ բարվոք վիճակում գտնվող ապաստարան: • Ջեռուցման համակարգը կարիք ունի հիմնանորոգման:
• Դպրոցը հնարավորություն ունի ծավալելու կրթական այլ ծառայություններ, սակայն չկան համապատասխան ֆինանսական միջոցներ դրանք իրականացնելու համար(լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում, արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում, սովորողների սննդի կազմակերպում):	• Դպրոցի հիմնավերանորոգման համար անհրաժեշտ են գումարներ, դրանք կարող են տրամադրել բարերարները : Սակայն այսօր հասարակությունը անտարբեր է դարձել դպրոցի խնդիրների նկատմամբ, իսկ նման անտարբերությունը վտանգավոր է հասարակության համար, քանզի խաթարվում է սերունդների բնականոն կապը, իսկ դպրոցն այդ կապն ապահովող այն կառույցն է, որ մշտապես պետք է գտնվի հասարակության յուրաքանչյուր անդամի ուշադրության կենտրոնում:

• Դպրոցի զարգացման համար հարկավոր է նրա առջև բացել լայն հնարավորություններ, դպրոցը պիտի լինի ոչ միայն աշակերտների, այլ նաև ողջ համայնքի կրթամշակութային կենտրոնը, կրթադաստիարակչական աշխատանք կատարի աշակերտների և նրանց ծնողների, համայնքի բոլոր բնակիչների հետ:	• Այսօր ուսուցիչը միայնակ է մնացել սերնդակրթության դժվարին աշխատանքում: Շատ ծնողներ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով չեն զբաղվում երեխաների կրթադաստիարակչական աշխատանքներով, իրենց թերացումների պատճառները փնտրում են դպրոցի վատ աշխատանքի մեջ, չեն աջակցում ուսուցիչների աշխատանքին, ոմանք նույնիսկ խրախուսում են երեխաների բացակայությունը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սերտ համագործակցություն ծնողական համայնքի հետ

Մանկավարժական համակազմում հմուտ մասնագետների առկայությունը

Սկզբունքային և թափանցիկ գործունեություն

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Համագործակցություն տարբեր կառույցների հետ (դպրոցների, մանկապարտեզների և այլոց հետ)

Սպորտային հաջողություններ

Ապահով միջավայր

Ներդպրոցական վերահսկողություն տնօրինության կողմից

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

ՏԱՐԱԿԱՐԳ ՈՒՆԵՑՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՍՊՈՐՏՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տարակարգ ունեցող ուսուցիչների ավելացում

Դպրոցի ֆինանսական միջոցների տնտեսման միջոցով դպրոցի վերանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում:

Ինտերակտիվ դասարանների ավելացում

Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավում `շրջանավարտների միավորում ստեղծելու միջոցով:

Բնագիտական առարկաների լաբորատորիաների ստեղծում

Ուսուցման որակի բարձրացում

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ



Վերոնշյալ խնդիրներն իրականացվելու են հետևյալ սկզբունքներով

- Համագործակցություն,
- Ստեղծագործելու ունակություն,
- Անհատականություն,
- Թափանցիկություն,
- Մարդասիրություն,
- Համակարգվածություն,
- Ներդաշնակություն:

Ուսումնական աշխատանքներ

-Ուսումնական համակարգը համարել դաստիրակչության ուսուցման և կրթության միասնական ամբողջության և կաըարել հետևյալ հարցերը՝,

- Ինչ նպատակով ենք սովորեցնում,
- Ինչ ենք սովորեցնում,
- Ում ենք սովորեցնում,
- Ինչպես ենք սովորեցնում.

-Սովրելու անհատական ոճի, սովորողների ինքնուրույնության իրականացման լավագույն ձևը համարել համագործակցային ուսուցումը,

-Արդյունավետ ուսուցման կարևորագույն պահանջներից համարել ներառարկայական և միջառարկայական ինտեգրված ծրագրի իմացություն,

-Արմատավորել ուսուցման աշակերտակենտրոն մեթոդները, ընդլայնել դասի դաստիրակչական գործառույթները,

-Արժեվորել սովորողների ինքնաճանաչողությունը,ինքն իրեն բացահայտելու բոլոր հմտությունները:

15+26=?
9+51=?
25+10=

Դաստիարակչական աշխատանքներ

-Դաստիրակչական աշխատանքներ իրականացնելիս ապահովել սովորողների արժանապատվության նկատմամբ հարգանքը՝ զուգակցված բարձր պահանջկոտության հետ,

-Մեծ ուշադրություն դարձնել հանդուրժողականության ուսուցմանը: Սովորողին հանդուրժողականության ոգով դաստիրակելու համար հնարավորություն ընձեռնել ազատ քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու և իրենց առջև ծառայած խնդիրների լուծման գործընթացին ակտիվորեն մասնակցելու համար,

-Ստեղծել պայմաններ սովորողների անձնային զարգացման, ճանաչողական, գեղագիտական և հոգևոր պահանջմունքների (արտադասարանական և արտադպրոցական) բնականոն գործունեության համար,

-Գնահատել մշակութային արժեքները,

-Նպաստել սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանը և իրականացմանը,

-Ձևավորել անձնական հիգենայի և առողջ ապրելակերպի հմտությունները,

-Ձևավորել հարգանք ՀՀ պետական խորհրդանիշների նկատմամբ:

Աշխատանք մանկավարժական անձնակազմի հետ

-Ուսուցիչների համար կազմակերպել սեմինարներ,

-Մանկավարժներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին,

-Մանկավարժների պարբերական վերապատրաստման և ատեստավորման արդյունավետ մեխանիզմների ներդրման շնորհիվ ապահովել վերապատրաստման հնգամյա պարբերաշրջան,

-Մանկավարժական աշխատողներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին,ՀՀ ԿԳՆ այլ նորմատիվ փաստաթղթերին,

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Աշխատանք ծնողական և աշակերտական խորհուրդների հետ

-Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման և դաստիարակության բարելավման գործում,

-Կարևորել ծնողական խորհրդի դերը,

-Ապահովել ծնողների մասնակցությունը կրթական գործընթացի իրագործմանը Հանրակրտության մասին ՀՀ օրենքի շրջանակներում,

-Ապահովել ծնողների ակտիվ մասնակցությունը կրթական բարեփոխումների ու ներդպրոցական և արտադպրոցական աշխատանքներին,

-Աջակցել աշակերտական ինքնակառավարման խորհրդի գործունեությանը,

-Ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդների հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը,

-Կազմակերպել սովորողների ինքնակառավարման աշխատանքներն ըստ դպրոցի աշակերտական խորհուրդի կանոնադրության,

-Նպաստել աշակերտ-ծնող, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ,հարաբերությունների ամրապնդմանը:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Դպրոց-համայնք փոխհարաբերությունները

-Դպրոցում պետք է գործեն կոլեգիալ կառավարման խորհրդատվական և խորհրդակցական մարմիններ, պետք է իրականացվի գործուն աշակերտական ինքնավարություն,

-Դպրոցը գործուն մասնակցություն պետք է ունենա համայնքի հիմնախնդիրների լուծմանը,աշակերտներին ներգրավելով այդ գործընթացում,

-Դպրոցը պետք է բաց լինի համայնքի համար նաև դասերից հետո: Ծնողները ու համայնքի բնակիչները պետք է ունենան հնարավորություն օգտվել դպրոցի գույքից, համակարգիչներից,գրադարանից, մարզադահլիճից և այլ ծառայություններից,

-Դպրոցը համայնքի հետ պետք է ապահովի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության մատչելիությունը,

-Դպրոցը իր գործունեության ու նախաձեռնությունների մասին պետք է իրազեկի համայնքին հաշվի առնելով համայնքի ավագանու և ղեկավարի կարծիքը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

-Դպրոցում ֆինանսավորումն իրականացվում է պետբյուջեյի միջոցների հաշվին,

-Ճշգրիտ հաշվառել դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները օրենսդրությանը համապատասխան,

-Հաշվառել ստացվող դրամակն միջոցները, ապրանքանյութական արժեքները և հիմնական միջոցները, ինչպես նաև արտացոլել աշակերտական շարժի հետ կապված գործողությունները,

-Հաշվառել պետական բյուջե կատավող վճարումները, պետական սոցիալական ապահովածության և այլ մարմինների կատարվող մուծումները,

-Ապահովել ժամանակին աշխատավարձի և արձակուրդային վճարումները,

-Իրագործել վարձատվության այլ տեսակների պարգևատվումների, խրախուսական գումարների ֆինանսական աջակցությունները՝ ըստ սահմանված կարգի,

-Կազմել ծախսերի նախահաշիվ, քնարկել դպրոցի կառավարման խորհրդում և ներկայացնել կպկլմ-ին:

ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային ու համայնքային կյանքին:

Թիմային աշխատանը դպրոցում լիարժեք տեղի չի ունենա, եթե աշխատանքներին չաջակցի դպրոցի տնօրենը:

Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրում է տվյալ սովորողի ուսուցիչների և աջակցության խմբի անդամների ժողով՝ ամփոփելու տվյալ ամսվա ընթացքում սովորողի ԱՈՒՊ –ով նախատեսված աշխատանքների, այդ թվում աջակցող ծառայությունների արդյունքները:

Արդյունավետ թիմային աշխատանքը պահանջում է ոչ միայն սոսկ հանդիպումների, քննարկումների անցկացում, այլև երեխայի նկատմամբ պարտականությունների հանձնառություն:
Նման թիմային աշխատանքի ժամանակ բոլորն ունենում են լսված և արժևորված լինելու զգացողություն:
Երեխայի շուրջն աշխատող ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների թիմային աշխատանքում կարևորագույն դեր ունի սովորողի ծնողը: Նա պետք է ակտիվորեն ներգրավված լինի իր երեխայի կրթության կազմակերպման գործընթացում:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Խնդիր

ԿԱՊԿՈՒ սովորողների գիտելիքների, կարողությ հմտությունների յուրացման համար անհրաժեշտ պայմանների և կրթութ. ապահովում:

Նպատակ

Աջակցող խմբի լավագույն աշխատանքի շնորհիվ բոլոր ներառված սովորողների կարիքներին համապատասխան և ԱՈՒՊ-ի ճիշտ պլանավորմամբ տալ համապատ. կրթություն

Քայլեր

Ուսուցիչների, ներառված սովորողների ծնողների հետ բազմամասնագիտական թիմի միջոցով հաճախ անցկացնել սեմինարներ, թրեյնինգներ:

Նեքին կարգապահական կանոններ

-Դպրոց աշխատանքի ընդունումը և աշխատանքից ազատումն իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխան,

-Ուսուցչական կազմի համար սահմանել 5-օրյա կամ 6-օրյա աշխատանքային շաբաթ,

-Ապահովել աշխատողների իրավունքների և պարտականությունների ճշգրիտ ու ժամանակին կատարման, նրանց ներկայացվող սահմանափակումների պահպանման համար անհրաժեշտ պայմաններ,

-Ապահովել անվտանգ աշխատանքային պայմաններ, ինչպես նաև, իրենց լիազորությունների սահմաններում, ապահովել օրենսդրությամբ սահմանված մյուս սոցիալական երաշխիքների իրականացումը,

-շխատանքային պարտականություններիկատարման համար աշխատողին տրամադրել մասնագիտական համապատասխան տեղեկատվություն, տեխնիկական և այլ միջոցներ,

Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Խնդիր — Հիմնանորոգում

Նպատակ — Ունենալ լիարժեք ուսումնական միջավայր՝ որակյալ կրթական պայմաններ ապահովելու համար:

Գործողություններ — Ընդգրկվել համապատասխան ծրագրերի մեջ, որոնք իրականացնում են դպրոցների հիմնանորոգում:

Հիմնանորոգման հնարավորության բացակայության դեպքում

Խնդիր — Շենքային պայմանների փուլային բարելավում

Նպատակ — Ունենալ լիարժեք ուսումնական միջավայր՝ որակյալ, անվտանգ կրթական պայմաններ ապահովելու համար:

Գործողություններ — Ճիշտ պլանավորել և ուղղորդել ֆինանսական միջոցները

Ակնկալվող արդյունքներ

Հրապուրիչ և որակյալ կրթականմիջավայր

Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած առաջադեմ դպրոց

Ժողովրդական սկզբունքներին համապատասխան ԱԽ և ԾԽ գործունեություն

Սովորողների բարձր ցուցանիշներ առարկայական օլիպմպիադաներում

Փորձառու և ճանաչված մասնագետներ, նորարարական և ստեղծագործ ուսուցիչներ

ՏՀՏ միջոցների լիարժեք ներդնում և կիրառում դասապրոցեսում

Աշակերտ թվի ավելացում

Սովորողների նախասիրությունների և համապատասխան հոսքեր

Սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց

Սովորողների ինտեգրում միջազգային սաշտին

Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն

21-րդ դարի կարողունակ և մրցունակ քաղաքացի

ԸՍՈՒՅԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ